ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019Թ. ԱՊՐԻԼԻ 2-ԻՑ 5-Ը ՓԱՐԻԶ
(ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
Հակոբ Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
Փարիզ (Ֆրանսիայի Հանրապետություն), 2019թ. ապրիլի 2-ից 5-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
Միջազգային էներգետիկ գործակալություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)**
Մասնակցել EU4Energy ծրագրի կողմից կազմակերպվող «Էներգետիկ անվտանգության քաղաքականություն» թեմայով ֆորումին և EU4Energy Ծրագրի Ղեկավար Կոմիտեի հանդիպմանը:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
Ֆորումի շրջանակներում ներկայացվեց Եվրոպական միության արևելյան գործընկերության երկրներում (Ադրբեջան, Հայաստան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա) 2010-2015 թվականներին էներգետիկ սուբսիդավորման քաղաքականության վերլուծությունը, որտեղ Հայաստանը որակվեց արդյունահանվող վառելիքի ամենաքիչ սուբսիդավորվող երկիր: Համաշխարհային բանկի ներկայացուցչի կողմից ներկայացվեց իրենց տեսությունը սուբսիդավորման հետևանքով առաջացող տարածաշրջանային խնդիրների և դրանց բարեփոխման մոտեցումների վերաբերյալ: Քննարկվեց տարածաշրջանում արդյունահանվող վառելիքից դեպի վերականգնվող էներգետիկայի անցման և դրա սուբսիդավորման հնարավորությունները և ներկայացվեց Հնդկական և Լեհական փորձը:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
Ղեկավար Կոմիտեի հանդիպման ընթացքում ելույթ ունեցա Հայաստանում շենքերի էներգաարդյունավետությանն ուղղված գործողությունների ներկայիս ընթացքի, արդյունքների և հետագա ծրագրերի վերաբերյալ: Ներկայացրեցի նաև, թե ինչ նոր ձեռնարկումներ են նախատեսվում շենքերում էներգաարդյունավետության միջոցառումների իրականացման ուղղությամբ:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Հանդիպման ընթացքում հաստատվեց 2019թ. էներգաարդյունավետության գործողությունների պլանը և ճանապարհային քարտեզը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց Հայաստանին դրամաշնորհ և տեխնիկական աջակցություն տրամադրելու վերաբերյալ, որի պայմանները և մանրամասները կքննարկվեն EU4Energy ծրագրի կողմից կազմակերպվող հաջորդ միջոցառումների ընթացքում, որոնք տեղի կունենան հաջորդաբար Բիշքեկում և Փարիզում:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Շարունակական աշխատանքներ տանել ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ուղղությամբ:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ.**

9 ապրիլի 2019թ.